

[Ամսաթիվ]

[Տանտիրոջ անուն]
[Տանտիրոջ հասցե]

Վերնագիր՝ խելամիտ հարմարությունների տրամադրման համար լրացուցիչ օրերի հայցում՝ կատարելու շտկելու կամ դադարեցնելու մասին եռօրյա ծանուցման պահանջը [վարձակալի անուն, հասցե և բնակարանի համար]

Հարգելի [Տանտեր],

Սույն նամակը ծառայում է որպես խելամիտ հարմարության պաշտոնական հայցում, որն առնչվում է շտկելու կամ դադարեցնելու մասին եռօրյա ծանուցմանը, որի ամսաթիվն է՝ [ծանուցման ամսաթիվ], որում Դուք ինձ խնդրում եք... [համառոտ բացատրել, թե ինչ է Ձեր տանտերը պահանջում կատարել: Օրինակ՝ Ձեր տանտերը կարող է խնդրել Ձեզ կատարել Ձեր վարձակալության պայմանագրի դրույթները՝ հեռացնելով Ձեր անձնական սեփականությունը ընդհանուր տարածքներից և այլն] Ես խնդրում եմ, որպեսզի ինձ ժամանակ հատկացնեք մինչև [ամիս/ամսաթիվ/տարի], որպեսզի կատարեմ ծանուցման պահանջը՝ որպես իմ հաշմանդամության համար խելամիտ հարմարություն:

Ես [ֆիզիկական/մտավոր հաշմանդամություն] ունեցող անձ եմ: [Խնդրում եմք նկատի ունենալ, որ ստիպված չեք տրամադրել առանձնահատուկ ախտորոշում, եթե չեք ցանկանում:] Իմ հաշմանդամության պատճառով ինձ համար դժվար կլինի կատարել ծանուցման պահանջն այսպիսի կարճ ժամկետում, որովհետև... [Բացատրեք, թե ինչու չեք կարողանա կատարել ծանուցման պահանջը եռօրյա ժամկետում և լրացուցիչ ժամանակը որքանով է առնչվում Ձեր հաշմանդամությանը: Օրինակ՝ գուցե Ձեր հաշմանդամությունն ազդում է Ձեր քայլելու, ծանր իրեր բարձրացնելու կամ այլ առաջադրանքներ և գործողություններ կատարելու կարողության վրա: Կամ գուցե Ձեր մտավոր հաշմանդամությունն ազդում է մահճակալից վեր կենալու Ձեր կարողության վրա կամ ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ Ձեր դեղորայքը ճշգրտելու համար: Գուցե Ձեզ ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ՝ գտնելու մեկին, ով կարող է օգնել Ձեզ, օրինակ՝ խնամակալ, ընտանիքի անդամ կամ գործը վարող մասնագետ:] Որպես այդպիսին՝ ինձ ավելի շատ ժամանակ է անհրաժեշտ, որպեսզի խելամիտ հարմարության տեսանկյունից կարողանամ կատարել ծանուցման պահանջը:

Որպես կացարան տրամադրող անձ, որը կառավարում է բազմաբնակարան համալիր, Դուք ենթակա եք դաշնային արդար կացարանների մասին օրենքին (FHAA, Federal Fair Housing Act) և Կալիֆոռնիայի արդար զբաղվածության և կացարանի մասին օրենքին: Արդար կացարանի մասին թե՛ դաշնային, թե՛ նահանգային օրենքներն անօրինական են համարում կացարան տրամադրողի կողմից հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականություն կիրառելը: Տե՛ս՝ 42 ԱՄՆ-ի օրենքների մասին օրենսգրքի § 3604 դրույթը, Կալիֆոռնիայի Կառավարության օրենսգրքի §§ 12927, 12955 դրույթները: FHAA-ն պահանջում է կացարան տրամադրողներից «ապահովել խելամիտ հարմարություններ կանոնների, քաղաքականությունների, գործելակերպերի կամ ծառայությունների տեսանկյունից», որպեսզի հաշմանդամություն ունեցող անձն ունենա «հավասար հնարավորություն՝ օգտագործելու և վայելելու տվյալ կացարանը»: 42 ԱՄՆ-ի օրենքների մասին օրենսգրքի § 3604(f)(3)(B) կետ, 24 Դաշնային կանոնակարգերի մասին օրենսգրքի § 100.204(a) կետ, *Գիեբելերն ընդդեմ Էմ և Բի Աստկսի.*, 343 F.3d 1143, 1146 (9-րդ ակտ, 2003 թ.): Մասնավորապես, FHAA-ն «կիրառում է հաստատուն պարտականություն տանտերերի նկատմամբ, որպեսզի նրանք խելամտորեն ապահովեն [հաշմանդամություն ունեցող անձանց] կարիքները ոչ միայն ֆիզիկական հարմարությունների», այլ նաև «վարձակալությունները կառավարող վարչական քաղաքականությունների» տեսանկյունից նույնպես, ինչպես օրինակ վարձակալության դադարեցման կառավարման քաղաքականությունները վարձակալական սեփականություններում: *Գիեբելեր*, 343 F.3d և 1146-1147, *Միացյալ Նահանգներն ընդդեմ Կալիֆոռնիայի Mobile Home Park Mgmt. Co.-ի*, 29 F.3d 1413, 1416 (9-րդ ակտ, 1994 թ.) («Շարժական տուն I»):

Որպես եզրակացություն կնշեմ, որ ես հաշմանդամություն ունեցող անձնավորություն եմ, ով ավելի շատ ժամանակի կարիք ունի, որպեսզի կատարի շտկելու կամ դադարեցնելու մասին եռօրյա ծանուցման պահանջը՝ որպես խելամիտ հարմարություն: Մասնավորապես, ես հայցում եմ, որ ինձ ժամանակ հատկացնեք մինչև [ամիս/ամսաթիվ/տարի]: Եթե չեք կարող բավարարելիմ հարցումը, ապա արդար կացարանի մասին օրենքները պահանջում են, որպեսզի ինձ հետ միասին ներգրավվեք ինտերակտիվ գործընթացում՝ փորձելու գտնել այնպիսի հարմարություն, որը համապատասխանում է իմ հաշմանդամությանն առնչվող կարիքներին:

Հաշվի առնելով տվյալ իրավիճակի սեղմ ժամկետը՝ հայցում եմ Ձեր պատասխանը որքան հնարավոր է շուտ: Ինձ հետ կարող եք կապ հաստատել հետևյալ կերպ՝ [կոնտակտային տեղեկատվություն]: Խնդրում եմ տեղյակ լինել, որ խելամիտ հարմարությանն առնչվող

անհարկի ուշացումը կարող է համարվել որպես մերժում: Եթե տանտերը չի ապահովում խելամիտ հարմարության խնդրանքի իրականացումը, ապա այն կարող է օգտագործվել որպես հաստատական պաշտպանություն անօրինական կալանավորման գործողության ընթացքում:

Չարգանքով՝

[անուն]